



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԿՈԴ
050.0108 Ն. 25.07.23**

25 հուլիսի 2023 թվականի թիվ 108-Ն

**Բ Ա Ն Կ Ե Ր Ի Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ի Հ Ա Կ Ա Ց Ի Կ Լ Ի Կ Շ Ե Մ Ի Չ Ա Փ Ը Հ Ա Ս Տ Ա Տ Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն
(2023 թվականի երկրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով՝ 2023 թվականի օգոստոսի 1-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ**

Արմեն Նուրբեկյան

Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2023 թ. երկրորդ եռամսյակ)

2023 թվականի հուլիսի 25-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ 1.5% մակարդակում¹:

Հակացիկլիկ շեմի սահմանված դրույքաչափը ուժի մեջ է 2023 թվականի օգոստոսի 1-ից²:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրոֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Նախորդ եռամսյակի համեմատությամբ ֆինանսական ցիկլի ինդեքսը գրեթե չի փոխվել, ինչը պայմանավորված է վարկային շուկայում առկա միտումների պահպանմամբ: Վարկավորման շուկայում ակտիվության աճի պահպանման և անվանական ՀՆԱ բարձր աճի պայմաններում 2023 թ. երկրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը³ և վերջինիս շեղումը իր երկարաժամկետ տրենդից գրեթե չեն փոխվել (համապատասխանաբար՝ 64% և շուրջ -10 տոկոսային կետ):
2. Հիպոտեկային վարկավորման պաշարային ցուցանիշի բարձր աճի տեմպը պահպանվել է, ինչն ուղեկցվել է անշարժ գույքի շուկայում գների աճով: Մեր գնահատումների համաձայն՝ անշարժ գույքի շուկայում հնարավոր զերարժևորման ռիսկի մեծությունը մնացել է անփոփոխ՝ կազմելով շուրջ 27%⁴: Հարկ է նշել սակայն, որ այս գնահատականը հիմնված է այն ենթադրության վրա, որ դեռևս նախորդ տարվանից արձանագրված անշարժ գույքի վարձակալական վճարների աննախադեպ բարձր աճի տեմպերը ժամանակավոր բնույթ են կրում

¹ Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով:

² 2023 թ. օգոստոսի 1-ի դրությամբ բանկերը պետք է բավարարեն ԿՀԲ 1.5% դրույքաչափի պահանջը՝ համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 6-Ն որոշման:

³ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2023 թ. առաջին եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

⁴ Անշարժ գույքի հիմնարարներով պայմանավորված գնի գնահատման մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է ՀՀ ԿԲ 2021 թ. Ֆինանսական կայունության հաշվետվության ներգիր 3-ում, որը հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.cba.am/AM/pperiodicals/Stability%20report_2022.pdf

և երկարաժամկետ հեռանկարում կարող են չպահպանվել: Առանց այս ենթադրության՝ անշարժ գույքի գերարժևորման գնահատված ռիսկի չափը ավելի փոքր է և կազմում է մոտ 13%:

3. Ընթացիկ ժամանակահատվածում ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի ցանկում շարունակում են առաջնային լինել աշխարհաքաղաքական միջավայրի անորոշությունները և դրանցից ածանցվող ռիսկերը: Մեր գնահատմամբ այդ ռիսկերի նյութականացման պարագայում առաջացող կորուստների մեծությունը և դրանց կլանման համար անհրաժեշտ կապիտալի հակացիկլիկ բուֆերի գնահատականը փոփոխություն չեն կրել: Միևնույն ժամանակ նշենք, որ, բանկային համակարգում կապիտալի և իրացվելիության փաստացի մակարդակները պահանջվող նվազագույնից բավականաչափ բարձր են, ինչն ավելի քան բավարար է տնտեսության բնականոն վարկավորման գործընթացի ապահովման համար:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում անփոփոխ թողնել ԿՀԲ դրույքաչափը՝ պահպանելով այն 1.5% մակարդակում: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաճանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից: